ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ Ա. ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ 2008թ. ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԴԻՄՈՒՄԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ Նախագահի թեկնածուն իր դիմումով սահմանադրական դատարանից բառացիորեն խնդրում է հետևյալը՝ «26.02.2007թ. «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-79-Ն) 2-րդ հոդվածի «բ» ենթակետը 2008թ. փետրվարի 19-ին անցկացվելիք ՀՀ նախագահի ընտրությունների ընթացքում, ինձ՝ ՀՀ նախագահի թեկնածու Արման Մելիքյանի համար համարել խոչընդոտ և վերացնել այն»:

Ուսումնասիրելով դիմումը և բերված փաստարկները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 52 հոդվածը Հանրապետության Նախագահի ընտրությունը հետաձգելու և նոր ընտրություն նշանակելու երկու դեպք է նախատեսում: Նախ՝ իրավունքի ուժով այն իրականացվում է մինչև քվեարկության օրը թեկնածուներից մեկի մահվան դեպքում, երկրորդ՝ ստեղծված իրավիճակի գնահատման արդյունքում, երբ Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ են առաջացել ու դրանք չեն վերացել: Ընդ որում, սահմանադրական նորմը հատուկ ընդգծում է անհաղթահարելի խոչընդոտի առաջացման հանգամանքը «...թեկնածուներից մեկի համար»: Սա այն պարագան է, երբ թեկնածուն չի մահացել, սակայն անձամբ այնպիսի իրավիճակում է հայտնվել, որ անհնարին է դարձել նրա մասնակցությունն ընտրական գործընթացին: Այդ իրավիճակի գնահատման իրավասությունն է վերապահված սահմանադրական դատարանին: Սահմանադրության 52 և 100 (կետ 4) հոդվածների տրամաբանությունից ելնելով է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի 5-րդ մասը սահմանել է. «Սահմանադրական դատարանը կարող է անհաղթահարելի ճանաչել այն խոչընդոտները, որոնք արդեն իսկ առաջացել են և տվյալ թեկնածուից անկախ պատճառներով անհնարին են դարձնում նրա հետագա մասնակցությունն ընտրական գործընթացներին»:

«Անհաղթահարելի խոչընդոտ» սահմանադրական դրույթն սկիզբ է առել ֆրանսիական սահմանադրահիրավական պրակտիկայից, և այս երկրի Սահմանադրական խորհուրդը նույնպես բազմաթիվ քննարկումների ժամանակ տվյալ դրույթը մեկնաբանել է որպես թեկնածուներից մեկի կոնկրետ վիճակով պայմանավորված ընտրական գործընթացին անձամբ նրա մասնակցության անհնարինություն։

Դատարանն իրավասու չէ և չի կարող խոչընդոտ վերացնել։ Դատարանն այն կարող է կամ ճանաչել անհաղթահարելի, կամ վերացած՝ ինչպես սահմանված է ՀՀ Սահմանադրության 52 և 100 (կետ 4) հոդվածներում։ Հետևաբար, սահմանադրական դատարանին ենթակա չէ դիմողի խնդրանքը՝ խոչընդոտը **վերացնելու** առումով։

ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Մելիքյանի բարձրացրած հարցն ակնհայտորեն չի վերաբերում «անհաղթահարելի խոչընդոտ» հասկացության սահմանադրահիրավական բովանդակությանը։ Դիմողն իրականում բարձրացնում է ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխության («ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-79-Ն օրենքի 2-րդ հոդվածի «բ» կետի) սահմանադրականության հարց, և այդ տեսանկյունից էլ ներկայացնում է հիմնավորումներ։ Սակայն ՀՀ Սահմանադրության 101 հոդվածով (1, 3, 4, 6, 7 և 8 կետեր) սպառիչ թվարկված են օրենքի կամ դրա առանձին դրույթի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտները, և ՀՀ Նախագահի թեկնածուին նման իրավասություն վերապահված չէ։ Սահմանադրական պահանջ է նաև այն, որ սահմանադրական դատարանը գործը քննում է միայն տվյալ հարցով դիմելու իրավունք ունեցող սուբյեկտի դիմումի հիման վրա։

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի համաձայն սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունում՝ եթե դիմումում առաջադրված հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանին կամ դիմողն իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան։

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ոչ միայն հաշվի չի առնվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 2-րդ մասի 4-րդ

կետի պահանջը, այլև չեն տարբերվել ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին և 4-րդ, 101 հոդվածի 6-րդ և 9-րդ կետերի հիմքերով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 և 75 հոդվածներով նախատեսված դիմումներին ներկայացվող պահանջները։

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

ՀՀ Սահմանադրության 52 և 101 հոդվածների, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32, 61 և 75 հոդվածների հիմքերով մերժել ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Մելիքյանի դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 փետրվարի 2008 թվականի
ՍԴԱՈ-12